

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Վ. Ավանեսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Վ. Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Դ. Կարապետյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Տ. Կարապետյան	ՀՀ վարչապետի օգնական
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Եգանյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Հ. Միրզոյան	Արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն
Ժ. Արամյան	Գինեգործության և կոնյակագործության ոլորտային քարտուղար
Հ. Առուստամյան	Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային քարտուղար
Հ. Թովիջյան	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Սարգսյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանն առընթեր «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Ա. Զաքարյան	«Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն
Բ. Ենգիբարյան	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն
Ա. Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
Գ. Գևորգյան	Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Ուդումյան	Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի գործադիր տնօրեն
Ս. Հովհաննիսյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացման շրջանակներում հաստատված ոլորտային գործողությունների ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ (Դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, Կոնյակագործություն, Գինեգործություն, Ճշգրիտ ճարտարագիտություն)

(Ա. Եգանյան, Տ. Սարգսյան)

13. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին «Technology and Science Dynamics Inc. /Armtab Technologies» ընկերությունը նախաձեռնությունը պաշտոնապես ներկայացնել ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհրդի առաջիկա նիստում.

2) հանձնարարել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ առանձին քննության առնել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

3) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝

ա. դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի վերաբերյալ «McKinsey & Company» ընկերության ներկայացրած առաջարկը քննարկել «Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության

տնօրեն Ա. Զաքարյանի և բոլոր շահագրգիռ կողմերի հետ և քննարկման արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին,

բ. Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի միջոցառումների իրականացման փուլում ներգրավել նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, ճարտարագիտության բաժանմունքի ղեկան Ա. Հաջյանին,

գ. կատարված միջոցառումների արդյունքների մասին եռամսյակային հաշվետվության մեջ կիսամյակային կտրվածքով արտացոլել նաև մոնիթորինգի ցուցանիշները և դրանք ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

դ. ներկայացնել միջոցառումների կատարման արդյունքների նկատմամբ իրականացվող մոնիթորինգի մեթոդաբանությունը.

4) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Կարապետյանին՝

ա. կոնյակագործության ոլորտի կանոնակարգման հետ կապված խնդիրներն առանձին քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ.

բ. ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ կատարել փոփոխություն, ըստ որի՝ վարկային մեխանիզմների միջոցով կիթանվի կոոպերատիվների ձևավորումը.

5) առաջարկել Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի նախագահ Գ. Գևորգյանին մինչև տարեվերջ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել Մաքսային միությանն անդամակցելու գործընթացում երկարաժամկետ պայմանագրերի ստորագրման (ՀՀ-ում վերամշակման ծավալների) վերաբերյալ առաջարկներ:

7) ընդունել ի գիտություն ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Կարապետյանի հաղորդումն առ այն, որ 2013 թվականի ընթացքում ծրագրային բացթողումներն (գործողությունների ծրագրով սահմանված չկատարված կամ մասնակի կատարված միջոցառումները) ամբողջությամբ կլրացնեն 2014 թվականին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ